« ԾՆՈՂԱԿԱՆ ՓԱՌՔԻ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԴՐԱ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- 2021 թվականի N -Ն

ԾՆՈՂԱԿԱՆ ՓԱՌՔԻ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՊԱՏՎՈՎՃԱՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքի 45-րդ հոդվածի 3.1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց համար ամենամսյա պատվովճար տալու կարգը՝ համաձայն հավելվածի.

2) Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց ամսական պատվովճարի չափը՝ ընտանիքի համար՝ 100000 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2019 թվականի սեպտեմբերի 1-ից հետո Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց վրա:

Հավելված

ՀՀ կառավարության 2021 թվականի

---------- -ի N -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԾՆՈՂԱԿԱՆ ՓԱՌՔԻ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՊԱՏՎՈՎՃԱՐ ՏԱԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց ամենամսյա պատվովճար (այսուհետ՝ պատվովճար) տալու հետ կապված հարաբերությունները:
2. Պատվովճարը նշանակվում և վճարվում է Օրենքով սահմանված կարգով Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց (այսուհետ՝ Շահառու):
3. Պատվովճարը նշանակում, վճարումն ապահովում և պատվովճարի գործը վարում (փաստաթղթերը հաշվառում) է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն):
4. Պատվովճարը նշանակվում է ՀՀ քաղաքացի հանդիսացող այն Շահառուին, ով Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն, հաշվառված է ՀՀ բնակության վայրի հասցեում:
5. Պատվովճար նշանակելու համար Շահառուի՝ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները (հաշվառման վայրը և հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը) ճշտում է Ծառայությունը՝ ինքնաշխատ եղանակով: Անհրաժեշտության դեպքում՝ Ծառայության կողմից կարող են իրականացվել հարցումներ համապատասխան մարմիններին՝ դիմումի և ներկայացված

փաստաթղթերի հավաստիության ստուգման նպատակով։

2. ՊԱՏՎՈՎՃԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ ԵՎ ՊԱՏՎՈՎՃԱՐ ՆՇԱՆԱԿԵԼԸ

3. Պատվովճար նշանակելու համար Շահառուն գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձամբ ներկայացնում է Ծառայության ցանկացած տարածքային կենտրոն։
4. Շահառուն պատվովճար նշանակելու համար գրավոր դիմումի հետ ներկայացնում է ՀՀ քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը և Ծնողական փառքի մեդալ ստանալը հաստատող վկայականը։
5. Շահառուն կրում է պարտականություն իր վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու, այդ թվում՝ Ծնողական փառքի մեդալից դատական կարգով զրկվելու դեպքում՝ տասնօրյա ժամկետում Ծառայությանը տեղեկացնելու համար։
6. Ծառայության տարածքային կենտրոնի աշխատողը՝

- դիմումում լրացված տվյալները համեմատում է անձը հաստատող փաստաթղթի և ներկայացված մյուս փաստաթղթերի տվյալների հետ.
- տեսաներածում է փաստաթղթերի բնօրինակները (այդ թվում՝ սույն կարգի 8-րդ կետում նշված և դիմումատուի կողմից ստորագրված հայտարարությունը) և էլեկտրոնային լուսապատճեները մուտքագրում կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում (այսուհետ՝ շտեմարան).
- հաշվառում է անձի դիմումը և տալիս դիմումն ընդունելու վերաբերյալ իր կողմից ստորագրված ստացական, իսկ փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմողին։

10. Ծառայության համապատասխան ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և առկա տվյալները, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- նշանակել պատվովճար.
- մերժել պատվովճարի նշանակումը։
- Պատվովճարի նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝
- պատվովճարի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում.
- անձը չի հանդիսանում ՀՀ քաղաքացի.
- անձը դատական կարգով զրկվել է Ծնողական փառքի մեդալից։

12. Պատվովճարը նշանակվում (անձը ձեռք է բերում պատվովճար ստանալու իրավունք) և վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից։
13. Եթե պատվովճար ստացող անձը կենսաթոշակառու է, ապա նրա կենսաթոշակի գործին կցվում են սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերի լուսապատճեները և պատվովճար

նշանակելու հաշվարկ-կարգադրությունը, իսկ եթե կենսաթոշակառու չէ, ապա կազմվում է պատվովճարի գործ: Ընդ որում, պատվովճարի գործը (փաստաթղթերը) վարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգին համապատասխան:

3. **ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ**

14. Պատվովճարը նշանակվում է ցմահ:
15. Յուրաքանչյուր ամսվա պատվովաճարը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:
16. Պատվովճար վճարելու ծախսերը կատարվում են պետական բյուջեում այդ նպատակով նախատեսված միջոցներից:
17. Պատվովաճարի վճարումը շարունակելու համար Շահառուն պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ վճարող կազմակերպությանը ներկայանալու (պատվովճար ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ վճարող կազմակերպությանը և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:
18. Չվճարված պատվովճարի գումարը վճարվում է յուրաքանչյուր հաջորդ ամսվա պատվովճարի գումարի հետ՝ մինչև սահմանված կարգով պատվովճար վճարելը դադարեցնելը:
19. Եթե պատվովճար վճարելը դադարեցվել է, ապա չվճարված պատվովճարի գումարը վճարվում է դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը պատվովճար ստանալու իրավունք է ունեցել:
20. Շահառուի մահվան պատճառով չվճարված պատվովճարի գումարը վճարվում է անկանխիկ եղանակով, Շահառուի մահվան ամսվանից հաշված՝ նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա պատվովճար ստանալու իրավունք է ունեցել:
21. Շահառուի մահվան դեպքում չվճարված պատվովճարի գումարը վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ Շահառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամին՝ եթե նա, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, շահառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում): Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը Ծառայության տարածքային կենտրոնին է ներկայացվել շահառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում շահառուի մահվան պատճառով չվճարված պատվովճարի գումարը ենթակա է ժառանգման:
22. **ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ ԵՎ ՎԵՐՍԿՍԵԼԸ**

23. Պատվովճարի ստանալու իրավունքը դադարեցվում է՝

- Շահառուի մահվան, ինչպես նաև նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում.
- Շահառուի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու դեպքում.
- Ծնողական փառքի մեդալից դատական կարգով զրկվելու դեպքում.
- Շահառուի՝ իր պատվովճար ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը Ծառայության որևէ տարածքային կենտրոնում ներկայացնելու դեպքում.
- պատվովճար ստանալու իրավունքը կորցնելու կամ պատվովճարի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում:

23. Սույն կարգի 22-րդ կետով նշված դեպքերում պատվովճար ստանալու իրավունքը դադարեցվում է այդ հանգամանքներն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:
24. Պատվովճար ստանալու իրավունքը վերականգնվում է՝ շահառուին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին կամ Ծնողական փառքի մեդալից զրկելու մասին դատարանի վճիռը վերացնելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնելու և գրավոր դիմելու դեպքում՝ պատվովճարը ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից:
25. Պատվովճար վճարելը դադարեցվում է՝

- պատվովճար ստանալու իրավունքը դադարելու դեպքում.
- սույն կարգի 17-րդ սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու դեպքում:

26. Պատվովճար վճարելը դադարեցվում է պատվովճար ստանալու իրավունքը դադարեցվելու օրվանից, իսկ սույն կարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետով նշված դեպքերում՝ այդ հանգամանքը առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:
27. Պատվովճար վճարելը վերսկսվում է՝ պատվովճար վճարելը սույն կարգի 25-րդ կետի 2-րդ կետի հիման վրա դադարեցված լինելու դեպքում՝ սահմանված հայտարարությունն ստորագրելու մասին վճարող կազմակերպությունից տեղեկատվություն ստանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե այդ տեղեկատվությունն ստացվել է պատվովճարը վճարելը դադարեցնելու ամսվանից սկսած՝ 12 ամսվա ընթացքում:
28. Պատվովճար ստանալու իրավունքը վերականգնվում է, և պատվովճար վճարելը վերսկսվում է, եթե Շահառուն, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում:
29. **Պատվովճարից պահումներ կատարելու, ավել վճարված պատվովճարի գումարը բռնագանձելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կարգով:**